

Ժողովուրդ

87 (2753)

17 հունիսի շաբաթ 2023 տպագրության ԺԲ տարի

Թ. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՀԱՆՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՆՔ ԳՈՐԾԱՐԿԵԼՈՒ 60 ԻՐԱՎՈՒՆՔ ԵՆ ՏՎԵԼ



2022 թվականի ընթացքում տրամադրվել է արդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ ավելի քան 60 ընդերքաօգտագործման իրավունք: Սա հատված է ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026թթ.) 2022 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցից: Ստացվում է՝ 2018 թվականին իշխանության եկածները ընդերքաօգտագործման թույլտվություններ տալը համարում են իրենց ձեռքբերումներից մեկն ու այն ամրագրում նաեւ զեկույցում: Իսկ այս հանգամանքը տարօրինակ է այնքանով, որ այս իշխանության կազմում մեծ թիվ են կազմում բնապահպան ակտիվիստները, որոնք Սերժ Սարգսյանի օրոք առիթը բաց չէին թողնում խոսելու հանքերի շահագործման վտանգների մասին: Նույն Լեւոն Նազարյանը, որ դեռեւս ընդդիմադիր պատգամավոր եղած ժամանակ պայքարում էր, օրինակ, Ամուլսարի հանքի շահագործման դեմ, բնապահպանական ակցիաների էր մասնակցում, ճանապարհներ էր փակում, խոսում էր հանքի շահագործման վտանգավոր ռիսկերի մասին, հիմա, սակայն, տարօրինակ կերպով լռում է: Ներկայումս ԱԺ ԶՊ խմբակցության պատգամավոր Սերգեյ Բազրատյանը 2021 թվականի օգոստոսի 23-ին ասում էր. «Հանքարդյունաբերությունը չպետք է շարունակել երկրում, և նախկինում էլ այնպիսի հանքարդյունաբերություն, որ վնասում էր բնապահպանությանը և մեր բնակիչների առողջությանը, պետք է բերվեն միջազգային ստանդարտներին: Պետք է դադարեցնել և չսպասարկել զարգացած երկրների շահերը»: Խոսեք նաեւ Փաշինյանի հայտարարությունների մասին: 2018 թվականի հոկտեմբերի 24-ին Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում հայտարարեց. «Ամուլսարի մասին ի՞նչ ենք ասում. մեզ պետք է փաստ և փաստարկ, որ Սեւանի համար այդտեղ վտանգներ չկան: Ասում են՝ չկա, հավատացե՛ք մեր խոսքին, փաստաթղթերին: Սեւանի հարցը Ղարաբաղի նման հարց է, չի կարելի ուղղակի փակ աչքերով գնալ այդտեղ»: Իսկ արդեն այս տարվա փետրվարին ՀՀ կառավարությունը «Լիդիան» ընկերության հետ 250 միլիոն դոլար արժեքով փաթեթ է ստորագրել: Հանքը պետք է աշխատեր դեռ 2018 թվականին, սակայն նույն իշխանությունը, ինչ-ինչ շահերից ելնելով, փակեց թեման: Նիկոլ Փաշինյանը խորհրդարանի ամբիոնից հայտարարում էր, թե Սեւանա լիճը իր համար Ղարաբաղի հարցին հավասար թեմա է, և եթե անգամ մի թեթեւ վնաս է կրելու հանքի շահագործումից, ուրեմն հանքը չի բացվի: Սակայն հիմա 60 ընդերքաօգտագործման իրավունք տալն արդեն ձեռքբերում է խոսքի և գործի մեծ տարբերություն:

Ք-ականները երեկ, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հավաքվել են Դիլիջանի ամենաշքեղ հյուրանոցներից մեկում՝ «Դիլիջան» հյուրանոցում: «Ժողովուրդ» օրաթերթին Ք-ական աղբյուրները հայտնեցին, որ իշխանականները դեռ չեն շտապել ժողով անել. երեկ տեղավորվել են, միայնակ հետ շփվել, դեսից-դենից գրուցել, զբոսնել, այլ կերպ ասած՝ երեկ լիարժեք հանգստի են նվիրել իրենց ԱԺ ծանր եռօրյաից հետո: Այդ պատճառով խորհրդարանական մեծամասնությունը հինգշաբթի օրն արագ սպառեց ԱԺ նիստերի օրակարգը, լրացուցիչ ժամանակ ավելացրեց նիստի հիմնական ժամանակին, որպեսզի մեկ օր շուտ գնան Դիլիջան, հանգստանան, նոր անցնեն գործի: ԶՊ քաղաքական ժողովը տեղի կունենա այսօր. գրել էինք, որ քաղաքական ժողովի օրակարգում հիմնականում ներքաղաքական հարցեր են լինելու, մասնավորապես՝ ավագանու ընտրությունները: Ք-ականների համար ավագանու ընտրություններում հաղթելը, կարելի է ասել, կենսա-մահու հարց է: Մտադիր են այսօրվա ժողովին հատուկ «ռազմավարական» պլան մշակել, որ 100%-անոց հաղթանակ ապահովեն այդ ընտրություններում:



ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը 2014 թվականի հուլիսին բնակարանի բաժնեմաս է նվեր ստացել: 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում գլխավոր դատախազը հենց այս բնակարանն է որպես անշարժ գույք հայտարարագրել: Ըստ նույն հայտարարագրի՝ Աննա Վարդապետյանն ավտոմեքենա չունի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նա «Անտառային ՇԻՆ» ՍՊԸ-ից երկու փոխառություն ունի՝ 47 մլն 780 հազար և 5 մլն 314 հազար դրամ: 2022 թվականի վերջում (բացառությամբ ավանդների) նա բանկային հաշիվներին ունեցել է 641 հազար, 101 հազար, 1 մլն 447 հազար դրամ և 15 եվրո, իսկ որպես կանխիկ դրամ հայտարարագրել է 600 հազար դրամ գումար: 2022 թվականին ՀՀ գլխավոր դատախազի եկամուտը 73 մլն դրամ է եղել, որից 1 մլն 216 հազար դրամը ստացված փոխառություններն են, 3 մլն 762 հազար դրամ նա ստացել է ՊԵԿ-ից, 47 մլն 780 հազար դրամ նա ստացել է կրկին վարկ բանկից, 614 հազար դրամ՝ Երևանի պետական համալսարանից, 12 մլն դրամ ստացել է վարչապետի աշխատակազմից՝ որպես աշխատավարձ (մինչև 2022 թվականի սեպտեմբերը նա աշխատել է կառավարությունում), և 7 մլն դրամ էլ նա ստացել է աշխատավարձ արդեն որպես դատախազ սեպտեմբերից հետո: Ստացած վարկերի մայր գումարի մնացորդը տարվա վերջին կազմել է 46 մլն 918 հազար դրամ: Որպես ծախս Վարդապետյանը նշել է միայն վարկերի մարմանն ուղղված վճարումները՝ 11 մլն 243 հազար դրամ:



Երբ ՀՀ հատուկ քննչական ծառայության նախկին պետ, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը դատական հայց ներկայացրեց «Ժողովուրդ» օրաթերթի դեմ, հայցը բավարարած դատավորը «պարզեւտարվեց» իշխանության կողմից. նա նոր պաշտոն ունի: Հիշեցնենք, որ մի հոդված էինք հրապարակել՝ նշելով՝ ապօրինի ծագման գույքի դեմ պայքարող Սասուն Խաչատրյանն ինքը չի կարողանում հիմնավորել իր ունեցվածքը, և լուրեր կան, թե նա Մոսկվայում մեքենաներ և այլ անշարժ գույքեր ունի, որոնք գրանցված են այլ անձանց անուններով: Առաջարկել էինք հրապարակավ, որ Խաչատրյանն ինքը ապացուցի, որ գույք չունի, ինչպես նա անում է ապօրինի ծագման գույքերի գործերով: Այս հրապարակման համար նա «գրպարտչական տեղեկատվությունը հերքելու և 2 մլն ՀՀ դրամ բռնազանձելու պահանջով» դատարան էր դիմել: Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սերգեյ Սահակյանը բավարարել էր Սասուն Խաչատրյանի հայցը ու ոչ միայն բավարարել էր, այլև ինքն էր հայցվող Խաչատրյանի փոխարեն ընկել ու ապացույցներ հավաքել մեր հրապարակման մասով, որը դատավորի էթիկայի և վարքականոնի կոպիտ խախտում է ու կարգապահական վարույթի հիմք: Դատավոր Սահակյանի չպատճառաբանված ու ապօրինի որոշման առիթով «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր ՀՀ արդարադատության նախարարին՝ կարգապահական վարույթ հարուցելու պահանջով, սակայն այդպես էլ մեր դիմումը մնաց անպատասխան, և չպատճառաբանված որոշման համար Սերգեյ Սահակյանը պատասխանատվության չենթարկվեց: Փոխարենը նա առաջխաղացում ունեցավ: 2023թ. մայիսի 26-ին ՀՀ նախագահի թիվ ՆՅ-175-Ա հրամանագրով՝ Սահակյանը նշանակվել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր: Ասել է թե՛ Սահակյանը իրավապահ համակարգի և քաղաքական իշխանության սրտի որոշումների համար խրախուսվեց:



ԻՐԱՎԻՃԱԿ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՄԻՊ-Ը ԱՅՑԵԼԵԼ Է ԵՐԱՄԻՆ

ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԱՆՑԱԿԵՏ



Վրաց-առևտրական սահմանի Վերին Լարս ավտոմոբիլային անցակետում...

Մարդու իրավունքների դաժանագոյն սահմանի Վերին Լարս...

Առաջին կանգառը Երասխում նոր կառուցվող մետալուրգիական գործարանի տարածքը էր...



րետ տեսակի դիպուկահար հրացաններից, քանի որ դրանք առավել թիրախավորված...

պատճառով խախտվում է գործարարների միջազգայնորեն երաշխավորված...

Պաշտպանը հանդիպել է նաև Երասխի բնակիչների հետ: Նրանք պատմել են, որ հունիսի 13-ին...

Բնակիչները նշել են, որ ադրբեջանական կողմն ուղիղ կրակ է բացել նաև...

Պաշտպանն այցելել է նաև Արարատի բժշկական կենտրոն, որտեղ տեսակցել է ադրբեջանական կրակոցներից վիրավորում ստացած...

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆՄԻՒԹԱՐ ՎԻՃԱԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱԿԵՐՈՒՄ

Երեանի բարեկարգ լինելու մասին քաղաքային իշխանությունները միայն խոսում են: Իրական կյանքում...

Կենտրոն վարչական շրջանի պատասխանատուներին տարբեր առիթներով ներկայացրել ենք...

Արուսյան 22ա հասցեում գտնվող բակում դուր տեսնում եք բակի պոկված ճաղավանդակները: Այնպիսի տպավորություն է, թե այստեղ...

մեր ուժերով նորոգեցինք, կոկիկ, գեղեցիկ մուտք էր, հիմա կարծես շրջանափակված լինի:

«ժողովուրդ» օրաթերթը հրապարակավ պահանջում է Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Դուկասյանից այցելել մեր բակ...

Մենք 10 օր ժամանակ ենք տալիս Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Դուկասյանին...

ՔՊ-ԱԿԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արթուր Յուվանյանից՝ 2021 թվականին...

քեկայով: «ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 4 մլն դրամ արժողությամբ ավտոմեքենան Արթուր Յուվանյանը գնել է Յանային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Յուվանյան Մովսիսյանից:

Իշխանական խմբակցության քարտուղարի բանակային դրամական միջոցներն էլ են ավելացել 600 հազար ՀՀ դրամով դառնալով 1 մլն 200 հազար դրամ: Նրա ընտանիքի անչափահաս անդամների ել խնամակալության տակ գտնվող անձանց տեղափոխության համաձայնագրում ներկայացված տվյալների համեմատ, ավելացել են 5 մլն 673 հազար դրամով դառնալով 12 մլն 337 հազար դրամը, որից 7 մլն 837 հազարը Ազգային ժողովի աշխատակազմից ստացած վարձատրությունն է, իսկ 4 մլն 500 հազար դրամը վարկ է «Հայէկոնոմ» բանկից, որը տարբերակներ է:

2022 թվականին հայտարարագրված ստացված վարկերի էլ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14 մլն 983 հազար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1 մլն 954 հազար դրամով: Այսպիսով, 2022 թվականին Արթուր Յուվանյանը հայտարարագրել է մեկ նոր մեքենա, իսկ նրա դրամական միջոցներն ավելացել են 8 մլն 227 հազար դրամով:

ԶԵՐԲԱԿԱԿԵՑ

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ 3-ՐԴ ԱՆՁԸ

Գավիթաբեռի թաղապետի օգնականի կրակոցների գործով 3-րդ անձին են ձերբակալել: «Ժողովուրդ» օրաթերթին հայցնի դարձավ, որ նրան ձերբակալել են խմբի կազմում սղանության փորձ կատարելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Գավիթաբեռ վարչական քաղաքի ղեկավար Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանի վրա կրակելու դեղին բավականին խոր արձագանք ունի. միայն այն վարկածը չէ, որ բնույթն են իրավադատական:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Գավիթաբեռի թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանն իր շրջապատի մի քանի մարդկանց հետ կռիվ է արել:

Մասնավորապես՝ թաղապետի օգնականը ծեծի է ենթարկել Կոտայքի մարզի մի բնակիչ՝ Ս. Ա.-ին՝ կոտորելով նրա ոտքերը:

Ու թե՛ս իրավապահները քննում են վարկած, թե թաղապետի օգնականը հողակտորում շինարարության համար է կռվի մեջ ընկել, որ կրակել են նրա վրա, այնուամենայնիվ, պարզվում է՝ դրանից առաջ էլ կա նախապատմություն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռոման Համբարձումյանի օգնականի վրա ուղղված մայիսի 19-ի կրակոցների գործով իրավապահները իրական կրակողին մինչ օրս չեն գտել և որոշել են կալանավորել Կոտայքի բնակիչ Ս. Ա.-ին, որպեսզի իրական կրակողը գա, ներկայանա: Կասկածներ ունեն, որ ոտքերը կոտրած քաղաքացու մտերիներն են հաշվեհարդար տեսել թաղապետի օգնականի նկատմամբ:

Տեղեկացանք, որ երեկ երկու անձի դարձյալ ձերբակալել են սպանության փորձին իբրև օժանդակելու համար, որոնցից մեկը նույնիսկ Երեանում չի եղել դեպքի օրը:

Ի դեպ, դատարանը չկալանավորեց երկու ձերբակալվածներին:

Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ իրավապահների մոտ տվյալներ կան՝ միջադեպի օրը Գավիթաբեռի թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանն է առաջինը մեքենայից կրակոցներ արձակել, երբ փայտեղծով հարձակվել են իր մեքենայի վրա: Ինչ գեղեցիկ է կրակել՝ մեզ դեռ չհաջողվեց պարզել:



Չինը մեքենայից կրակոցներ արձակել, երբ փայտեղծով հարձակվել են իր մեքենայի վրա: Ինչ գեղեցիկ է կրակել՝ մեզ դեռ չհաջողվեց պարզել:

Չի՞ցեցնենք, որ այս տարվա մայիսի 19-ին մի խումբ անձինք, դարանակալելով «Վոլսկվազեն տուարեզ» մակնիշի ավտոմեքենային, որի դեկին եղել է թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանը, մահակներով վնասել են հիշյալ ավտոմեքենան, իսկ 30-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրազենով կրակել է ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետևանքով թաղապետի օգնականի թիկունքային հատվածում պատճառվել է մարմնական վնասվածք:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հայտնած տեղեկության՝ դեպքին մոտ 2-3 ամիս

առաջ նախորդել է հողակտորի հարցի շուրջ 41-ամյա տղամարդու և մի 30-ամյա տղամարդու միջև սուր վիճաբանություն:

Ըստ ArmLur.am-ին հասած տեղեկությունների՝ քաղաքացին հողակտոր է ունեցել, որի վրա շինարարություն է կատարել, և թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական Մխիթարյանը (չի բացառվում հենց Ռոման Համբարձումյանի հանձնարարությամբ) անընդհատ միջամտել է, խոչընդոտել քաղաքացուն: Թաղապետի տեղակալ Հրաչյա Հակոբյանը մեզ հետ զրույցում պնդում է, որ թաղապետի օգնականը հողակտորի զավթման հետ որե՛ն առնչություն չունի և չի ունեցել, և իրենց համար կատարվածը ամբողջով է:

ՔՆՆՐ ՍՆՆՈՒԿՅԱՆ

ՆԵՐՍՈՒԾՈՒՄ

ՊԵՏ-Ը ԿԱՆԽԵԼ Է



ՀՀ ՊԵՏ արեւելյան մաքսատուն-վարչության Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ-բաժնի մաքսային ծառայողների իրականացրած ուսումնասիրության արդյունքում հսկողություն է սահմանվել Ղրղզստանի Հանրապետությունում հաշվառված երկու բեռնատար տրանսպորտային միջոցի նկատմամբ: Այս մասին տեղեկացնում են ՊԵՏ-ից:

Այսպես, ԵԱՍՄ մաքսային օրենսդրության պահանջների համաձայն՝ օրերս մաքսային կետ-բաժնում հսկողություն իրականացնելու նպատակով նշված բեռնատար տրանսպորտային միջոցներն ուղարկվել են խորը գնման անգար: Պարզվել է, որ տարանցման հայտարարագրերում բեռների վերաբերյալ տեղեկատվությունը ճշգրիտ չէ:

Տրանսպորտային միջոցներից մեկում հայտնաբերվել է շուրջ 4300 կգ ընդհանուր քաշով չհայտարարագրված ապրանք՝ հագուստ, կոշիկ, ռետինե խողովակներ, պաստառներ, ճամպուրկներ:

Պարզվել է նաև, որ ուղեկցող փաստաթղթերում ներկայացված ապրանքների և փաստացի առկա ապրանքների քաշերի մեջ կա անհամապատասխանություն. հայտարարագրված է եղել 17 522 կգ, սակայն ապրանքների իրական քաշը կազմել է 13 296 կգ:

Մյուս բեռնատար տրանսպորտային միջոցի մաքսային գնման արդյունքում հայտնաբերվել է չհայտարարագրված 2.300 կգ քաշով սուր հագուստ: Պարզվել է նաև, որ տարանցման հայտարարագրում նշված են եղել ոչ ճշգրիտ տեղեկություններ: Մասնավորապես, հայտարարագրվել է 3.290 կգ կոկոսի մանրաթելի քաշան, սակայն բեռնատարի մեջ տվյալ ապրանքի փաստացի քաշը կազմել է 572 կգ:

Փաստերի առթիվ կազմվել են մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություններ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316 հոդվածի հատկանիշներով:

Ապրանքները հիմնականում Ղրղզստանի, Չինաստանի, Ուզբեկստանի և Ռուսաստանի Դաշնության արտադրանք են: Բեռնատարները կապարակվել են և կայանվել Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ բաժնի տարածքում:

ՄԱՆՐԱՄԱՆՈՒՄ ԵՆ

ՊՆ-Ն ՈՒ ՕՏԱՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ

Պաշտպանության նախարարության դաշնային անձինք, 2014 թվականի հուլիսի 24-ին կնքված անգար գույքի առուվաճառի դայանագրով, խախտելով մի ԵԱՄԿ կարգավորումներ, նախարարությանն անհասույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր գյուղում գտնվող 1198,09 քմ մակերեսով անգար գույքը և «հասուկ նւանակության» 6.0536 հա հողամասն ուղղակի վաճառքով 8 մլն 717 հազար 184 դրամով օտարել են Բաղաբաղի Ա.Ս.-ին:

Ջինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից 2023 թվականի ընթացքում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացի Ա.Ս.-ն գույքը ձեռք բերելուց հետո՝ 2017

թվականի հուլիսի 17-ին, «հատուկ նշանակության» հողամասը և շինությունները, այդ թվում՝ գորանոցը, 400 հազար դրամով վաճառել է մեկ այլ քաղաքացու՝ Վ.Գ.-ին: Վ.Գ.-ն ձեռք բերված անշարժ գույքը 2018 թվականի հունվարի 11-ին գրավադրել է բանկում 11 մլն դրամով, իսկ 2022 թվականի օգոստոսի 9-ին՝ 86 մլն 500 հազար դրամով (ձեռք բերման գնից տասն անգամ թանկ):

Ուսումնասիրությամբ տվյալներ են ձեռք բերվել նաև այն մասին, որ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ա.Ա.-ն, անտեսելով Կադաստրի կոմիտեի 2014 թվականի հուլիսի 4-ին տրված տեղեկանքը, համաձայն որի՝ վերոնշյալ հողամասը «հատուկ նշանակության» է, վավերացրել է պայմանագիրը, Կոմիտեի աշխատակիցներն իրականացրել են իրավունքների պետական գրանցում՝ քաղաքացուն տալով սեփականության

իրավունք, իսկ Պաշտպանության նախարարության պաշտոնատար անձինք պետական սեփականության հողամասն օրենքի խախտմամբ վաճառել են քաղաքացուն:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրությամբ պարզված հանգամանքներն առերևույթ պարունակում են Քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հատկանիշներ՝ դատախազությունը 2023 թվականի հունիսի 8-ին ուսումնասիրության արդյունքներն ուղարկել է Հակակոռուպցիոն կոմիտե քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

2023 թվականի հունիսի 9-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը):

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԵԼ Է

Հունիսի 14-ին լրացավ Իջեան քաղաքի 39-ամյա բնակիչ Սասուն Էդիլյանի երկամյա կալանքի ժամկետը: Ս. Էդիլյանը դատարանի որոշումով կալանքի տակ է 2023թ. ապրիլի 14-ից: Հունիսի 13-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը որոշում կայացրեց նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Դատարանի որոշմամբ՝ Ս. Էդիլյանը հունիսի 13-ի երեկոյան կալանքից ազատվեց, նրա նկատմամբ ընտրվեց խափանման այլ միջոց: Բանվորությամբ զբաղվող, շինարարական տարբեր աշխատանքներ կատարող, մանկահասակ երեք երեխաների հայր Սասուն Էդիլյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամ քննիչի հակառակ կամ նրա կամքն անտեսելով, հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով, ընտանեկան դրության կամ հաշմանդամության կամ պայմանավորված խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ): Ենթադրյալ հանցագործությունը կատարվել է 2023թ. մարտին: Ս. Էդիլյանը մեղադրվում է Իջեան քաղաքի բնակիչ 7-ամյա տղայի նկատմամբ սեռական բնույթի գործողություններ կատարելու համար: Նա չի ընդունում մեղադրանքը: Նրա ընտանիքի անդամի վկայությամբ՝ Սասուն Էդիլյանը ամուսն է, նշված հանցագործությունը 7-ամյա տղայի հնարած է. երեխան առողջության հետ կապված խնդիրներ ունի, ենթադրյալ հանցագործությունը երեխայի երեակայության արդյունքն է: Սասուն Էդիլյանի ընտանիքի անդամը լրագրողիս հայտնեց, որ ընտանիքն ընթացքում 7-ամյա տղայի է Ս. Էդիլյանի միջոց առերեսում է կատարվել: Ս. Էդիլյանի շահերը պաշտպանում է ծագումով Իջեան քաղաքից փորձառու փաստաբան, որը նախկինում ընկի է աշխատել:

ԱՆՉՐԵՎՆԵՐԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ԽՈՏՀՈՒՆՉԻՆ

Տավուշի մարզում շուրջ մեկուկես ամիս անձրեւներ են տեղում: Շարունակվող անձրեւները խանգարում են, որպեսզի խոտհունձի աշխատանքները մեկնարկեն: Խոտհարքներում, տնամերձ հողամասերում կանաչ խոտը հասունացել է, սակայն այն հնձելու համար հարկավոր է արեալին կայուն եղանակ: Գյուղացիները մտավախություն ունեն, որ անձրեւները շարունակվելու դեպքում հասունացած խոտը կարող է ընկնել, իսկ պառկած խոտը հնձելը դժվար է. պառկած խոտը ամբողջովին կամ մասամբ փտում է, դառնում անորակ անասնակեր:

Տավուշ ՈՍԿԱՆ ՍՈՐԳՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԿԵԱՌՈՒՑՎԻ 23 ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը հունիսի 16-ի նիստում վերաբախում կատարեց 2023-ի բյուջեում, որով նախատեսվում է գումար սրամադրել Վայոց ձորի եւ Տավուշի մարզերում 23 նոր կրթական հաստատության կառուցման համար՝ 9 կրթահամալիր եւ 14 դպրոց:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ներկայացնելով նախագիծը, հիշեցրեց, որ Սյունիքի մարզի համար Կառավարությունը արդեն կայացրել է կրթահամալիրների ձեւավորման առանձին որոշում՝ 414 մլն դրամ ուղղելով նախագծանախահաշվային փաստաթղթերին եւ 40 կրթահամալիրների ձեւավորման խնդիր դնելով Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերում:

«Այս նախագիծը հերթական նախագիծն է Կառավարության խոշորագույն ծրագրերից՝ 300 դպրոցների եւ 500 մանկապարտեզների կառուցման, վերակառուցման եւ հիմնանորոգման: Աշխատանքային խմբերն իրականացրել են մանրամասն տեղազննություններ. նշված երեք մարզերում դպրոցական շենքերը եւ մի շարք այլ գործոններ հաշվի առնելով՝ Վայոց ձորի մարզում ընտրվել են 4 բնակավայրեր, որտեղ կձեւավորվեն կրթահամալիրներ, Տավուշի մարզում՝ 5 բնակավայր: Նաեւ առանձնացվել են Վայոց ձորի մարզի երկու խոշոր դպրոցներ, եւ այստեղ դպրոցական Նոր շենքեր կկառուցվեն: Տավուշի մարզում այն բնակավայրերը, որտեղ Նոր դպրոցներ կկառուցվեն, ութն են: Սյունիքի մարզում ընտրվել են 4 քաղաքային դպրոցներ, որտեղ նույնպես կուենանք արդիական պայմաններին ամբողջությամբ համապատասխանող դպրոցական Նոր շենքեր: Այսպես, նախագծով



գումար կհատկացվի ընդհանուր առմամբ 23 հաստատության համար, որոնցից 9-ը կրթահամալիր են եւ 14-ը՝ դպրոց: Ժամանակակից ու ֆինանսական ռեսուրսները խնայելով՝ նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք կբերվեն առկա նախագծերի տեղակապման միջոցով՝ բացառությամբ Նոյեմբերյանում 1 դպրոցի, որտեղ անհրաժեշտ է անհատական նախագիծ»,- ասաց նախարարը:

Նա նշեց, որ վերջին ամիսներին Կառավարությունն արդեն 3 նմանատիպ որոշում է կայացրել 107 հաստատությունների մասով, որոնցից 60-ը կրթահամալիրներ են, 47-ը՝ առանձին դպրոցներ:

«Արդեն նշեցի՝ Սյունիքում՝ 40 կրթահամալիր, Արմավիրում՝ 4 կրթահամալիր եւ 8 դպրոց, Արագածոտնում՝ 7 կրթահամալիր եւ 8 դպրոց, Գեղարքունիքում՝ 9 կրթահամալիր եւ 6 դպրոց, Արարատում՝ 3 կրթահամալիր եւ 9 դպրոց, Կոտայքում՝ 1 կրթահամալիր եւ 12 դպրոց: Այս որոշմամբ հաստատությունների թիվը կդառնա 130՝ վերաբերելով շուրջ 40 հազար աշակերտների»,- ասաց Ժաննա Անդրեասյանը: Նա նշեց, որ առաջիկայում կներկայացվեն նմանատիպ որոշման նախագծեր Լոռու եւ Շիրակի մարզերի, ինչպես նաեւ Երեւանի համար՝ ամբողջ հանրապետությունը ծածկելով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ՝ ԱՐՑԱԽՅԻՆԵՐԻՆ

Արցախի Հանրապետության կառավարությունը ԵՐԶՎԱԿԱՎԱՄԱՆ ՈՂԶ ԸՆԹՔԱԳՐՈՒՄ ՏԱՐԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ միջոցով սատար է կանգնել գյուղատնտեսության ոլորտում ճնշված գյուղացիներին՝ փորձելով մեղմացնել բոկադայի բացասական ազդեցությունը ճնշվածության այս ճյուղի վրա: Այս մասին հայտնում են Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունից ու ներկայացնում իրականացրած ու իրականացվող ծրագրեր.



վարձավճարների 10 %-ով իջեցման վերաբերյալ՝ նախորդ տարի գործող գների համեմատությամբ. որոշում է կայացվել երաշտից տուժած աշնանացան ցանքա-

տարածքները բերքահավաքից հետո փոխել պետական միջոցների հաշվին՝ նախապատրաստելով դրանք 2024 թվականի ցանքսին, ինչը շուրջափելի ծախսերից կազատի հողօգտագործողներին:

Ներկայումս հանրապետությունում ընթանում են հացահատիկայինների, ջերմոցային տնտեսություններում բանջարաբուստանային մշակաբույսերի, ինչպես նաեւ որոշ պտղատեսակների բերքահավաքը: Կառավարությունը հոգացել է հացահատիկայինների ցանքատարածքներում եւ այգիներում բերքահավաքի հնարավորինս անվտանգ կազմակերպման մասին եւս:

Որոշում է կայացվել նաեւ աջակցել թափ արտադրանքի, մասնավորապես՝ բարձրորակ դրձաբի իրացման գործընթացին՝ նախապատվությունը տալով հատկապես տնային տնտեսություններում վերամշակված արտադրանքին: Պետությունը պատրաստ է գնել թափ բարձրորակ դրձաբը՝ վճարելով 1 լիտրի դիմաց 3000 դրամ:

Այսպիսով, թափ վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին ընձեռնվում է բացառիկ հնարավորություն՝ շահավետ պայմաններով, պետության աջակցությամբ ու երաշխավորությամբ իրացնել սեփական արտադրանքը՝ գերծ մնալով մի շարք լրացուցիչ ծախսերից ու քաշքշուկից»:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 26 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 27-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՐԱՐՎԵՍ

ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Խ. Աբովյանի անվան հայկական դեսական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում տեղի է ունեցել Հայ դարավեժի դասնոթյան քանգարանի բացման հանդիսավոր արարողությունը:

Բացմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արա Խզմայանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Արթուրի Գեորգյանը, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի եւ պարավեստի ուղորտի ներկայացուցիչներ:

Հայ պարավեստի պատմության թանգարանը բացառիկ է. այն իր տեսակով միակն է ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ աշխարհում:

ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյանը շնորհավորել է Հայ պարավեստի պատմության թանգարանի ստեղծման, հիանալի միջավայրի ձեւավորման առիթով եւ նշել, որ կրթական հաստատությունում թանգարանային միջավայրը ստեղծում է հավելյալ արժեք ձեռք բերելու հնարավորություն. «Հաճախ ենք խոսում այն մասին, որ թանգարանները պետք է դառնան կրթական տարածքներ՝ վերածվելով միջավայրի, որտեղ սովորում են երեխաները, եւ որտեղից թանգարանի ցանկացած տարիքի այցելու իր հետ արժեքային որել է բան է տանում»: Նախարարն ընդգծել է՝ առանց գեղարվեստական կրթության բաղադրիչի հնարավոր չէ ունենալ ստեղծարար, նախածեռնող, դժվարությունների առաջ չերկնջող քաղաքացի, իսկ արվեստը դրա ճանապարհներից մեկն է: «Ստեղծագործությունն է, որ մղում է մեզ հասկանալու այն լուծումները, որոնք առաջին հայացքից տեսանելի չեն, ու պարն էլ դրա ամենավառ օրինակներից է: Այն ցույց է տալիս, թե մարդն ինչպես կարող է մարմնակրթությունը վերածել արվեստի: Վստահ եմ Պարի թանգարանը նոր ծրագրերի եւ գաղափարների իրագործման յուրահատուկ միջավայր է դառնալու»:,- եզրափակել է ԿԳՄՍ նախարարը: Շնորհավորական խոսքով է հանդես եկել նաեւ Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Արթուրի Գեորգյանը:



նը: Նա ընդգծել է, որ ստեղծված կրթական եւ թանգարանային միջավայրը նպաստելու է ուսանողի կրթության, գիտական կարողությունների եւ կատարողական արվեստի որակի բարձրացմանը: Հայ պարավեստի պատմության թանգարանի ստեղծման գաղափարը եւ նախածեռնողը Հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի պարավեստի, մանկավարժության եւ դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Բերդ» անսամբլի գեղարվեստական ղեկավար, մանկավարժական գիտությունների թեկնածու Կարեն Գեորգյանն է: «Այս թանգարանը մեր պարի երախտավորների ստեղծած պարավեստի ամբողջական պատմությունն է: Թանգարանում մեկտեղել ենք պարավեստի հսկաների աշխատանքը, նվիրումը, պարավեստի նկատմամբ նրանց դրսևերած վերաբերմունքը»,- ասել է Կարեն Գեորգյանը: Թանգարանի 4 սրահում ցուցադրված են պարավեստի պատմությանը, պարային ծիսական արարողությունների վերաբերող իրեր, կյութեր, թանգարանային նմուշներ՝ նախաքրիստոնեական շրջանից մինչեւ մեր օրեր: Ցուցադրության են ներկայացված նաեւ տարազներ, բացառիկ ուսումնասիրություններ, ձեռագրեր, հայ պարավեստի պատմության վերաբերյալ եզակի գրականություն, ինչպես նաեւ թանգարանային բացառիկ նմուշների կրկնօրինակներ: Թանգարանում ներկայացված են նաեւ հսկայածավալ պատմագիտական, հնագիտական, տարագագիտական եւ պարագիտական աշխատանքներ: Դրանք կնպաստեն պարավեստով զբաղվողների կրթական որակի բարձրացմանը, նրանց ճանաչողական գիտելիքների հարստացմանը եւ ոլորտի ուսումնասիրությունների ընդլայնմանը:

ՉՈՒԲԱՐՅԱՆ

ՔԱՆԴԱԿԸ ՏԵՂԱԴՐՎԵԼ Է

ՀՀ ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյանը մասնակցել է Երեւանի մանկական այգում Ղուկաս Չուբարյանի «Սուրբ լինի անունը Քո» քանդակի բացման հանդիսավոր արարողությանը: Մեծանուն արվեստագետի, հայ անվանի քանդակագործի, ՀԽՍՀ ժողովրդական նկարչի, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի անդամ Ղուկաս Չուբարյանի քանդակի բացմանը ներկա են եղել նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմայանը, Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը, ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Դումանյանը, արվեստագետի ընտանիքի անդամները եւ մտավորականներ:

Նախարարի ընդգծմամբ՝ Չուբարյան արվեստագետից, նրա ժառանգությունից շատ բան կա սովորելու, եւ այս վայրը կդառնա նրա անցած դժվարին ուղին հիշելու եւ վերափմաստավորելու տեղերից մեկը: «Մեզ պետք են թռչիչից չվախեցող արվեստագետներ եւ ստեղծագործողներ, ինչպիսին Չուբարյանն էր, որովհետեւ դա է ճշմարիտ արվեստի գրավականը,- ասել է ժաննա Անդրեասյանը եւ հավելել:- Չուբարյանի ժառանգությունն ուղերձ է, որը պարտավորություն ունենք փոխանցելու նաեւ մեր երեխաներին՝ նրանց համար կրթության մաս դարձնելու եւ դրանով իսկ շարունակելու եւ զարգացնելու այն»: Ղուկաս Չուբարյանի դստեր՝ Անուշ Չուբարյանի խոսքով՝ քանդակը Ղուկաս Չուբարյանը նվիրել է իր՝ 1942 թ. անհայտ կորած եղբոր հիշատակին, որի աճյունը գտնվել է 2007-ին: Անուշ Չուբարյանն ընդգծել է, որ իր հայրը կենսուրախ եւ լավատես մարդ էր՝ չնայած կյանքի բարդ պայմաններին:

Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը նշել է՝ հաճախ չէ, որ առիթ է ստեղծվում Երեւանի դիմագիծը ստեղծող, կերտող անձի 100-ամյակի առթիվ մեկ վայրում հավաքվել: «Ազատության հրապարակից մինչեւ Մատենադարան եւ ամենուր. քաղաքում շատ են Չուբարյանի աշխատանքները՝ Թումանյանի քանդակը, Չարենցի կիսանդրին, Սպենդիարյանի, Մեսրոպ Մաշտոցի քանդակները եւ այլն»: ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Դումանյանն ընդգծել է, որ ՀՀ նախագահը կարելու է հայ մեծերի փառաբանումը: «Ես պատիվ եմ ունեցել իմ կյանքի ընթացքում շփվել Չուբարյանների գերդաստանի հետ, որոնք մեծ ներդրում ու ավանդ ունեն մեր երկրի կրթական, գիտական, մշակութային կյանքի զարգացման գործում»: Նշենք նաեւ, որ Ղուկաս Չուբարյանի ծննդյան 100-ամյակը պատշաճ նշանավորելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով ստեղծվել է հոբելյանական հանձնաժողով՝ նախարարի տեղակալ Արա Խզմայանի նախագահությամբ: Հոբելյանական տարվա ընթացքում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են մեծանուն արվեստագետի հարուստ ժառանգության վերաբերմունքը եւ հանրայնացմանը:

ՎԱՐՊԵՏԱՑ ՂԱՍ

ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ՝ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻՆ

Հայաստանի դեսական սիմֆոնիկ նվագախմբի նախաձեռնությամբ՝ աշխարհահռչակ գալարափողահար եւ դիրիժոր, Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջին գալարափողահար Շտեֆան Գորը վարդիպատ դաս է անցկացրել Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցում:

Մասնակցում էին նվագախմբում նվագող երաժիշտներ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողներ, երաժշտական դպրոցների աշակերտներ, մանկավարժներ:

Վարպետության դասի ընթացքում Շտեֆան Գորը լսել է երիտասարդ գալարափողահարների կատարումները, տվել խորհուրդներ, երաժիշտների հետ

կատարել են վարժություններ: Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջին գալարափողահարը պատասխանել է նաեւ ներկաների հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին կատարողական նրբություններին, շնչառական վարժություններին, ինչպես նաեւ մեծահամբավ արտիստի երաժշտական կարիերային:

Գալարափողահար Գարեգին Ղազարյանը նշեց, որ վարպետաց դասը տվեց նոր գիտելիքներ, Շտեֆան Գորը բացառապես որոշ թերություններ իր նվագի մեջ: Գալարափողահարը նկատեց, որ Շտեֆան Գորի բոլոր դիտողություններն ինքը կուղղի իր աշխատանքում:

Սարգիս Հակոբյանը սովորում է Երեւանի պետական կոնսերվատորիայում: Ընդգծում է, որ վարպետաց դասն ուսա-

նելի էր, եւ Շտեֆան Գորի հետ հանդիպման ընթացքում ստացավ մասնագիտական գիտելիքներ:

Նշենք, որ մեծանուն գալարափողահար Շտեֆան Գորին հնարավորություն կունենան ունկնդրելու նաեւ հայ երաժշտասերները:

Հունիսի 17-ին՝ ժամը 19:00-ին, «Արամ հաչատրյան» համերգասրահում տեղի կունենա գալարափողահարի եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգը: Համերգի ծրագրում ընդգրկված են Աստուհյան Դավրժակի Սերենադը՝ գրված փողային գործիքների համար, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի Գալարափողի կոնցերտ թիվ 3 եւ Լյուդվիգ վան Բեթհովենի Թիվ 3 սիմֆոնիան՝ «Հերոսական»: Համերգը կղեկավարի Շտեֆան Գորը:

● Հունիսի 18-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Քանի՞ տարի վավերականության ժամկետով է սրամադրվում ՀՀ քաղաքացու անձնագիրը կամ նույնականացման քարտը:

Անի Խաչատրյան (25 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշման եւ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- մինչեւ 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով,

- 6 տարեկանից մինչեւ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով,

- 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով,

- մինչեւ 16 տարեկան, ինչպես նաեւ 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագրերը տրամադրվում են մինչեւ նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով: Պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի միջնորդությամբ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագիր կարող է տրամադրվել նաեւ այլ ժամկետով՝ ուսման, բուժման, մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով:

ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Նույնականացման քարտը 16 տարին լրացած քաղաքացիներին տրամադրվում է 10 տարի վավերականության ժամկետով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ես կարո՞ղ եմ միանգամից Սահմանադրական դատարան դիմել:

Արտակ Տերտերյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների եւ ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաեւ համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

ՀՀ Սահմանադրական դատարան

«ԺՈՂՎՈՒՐԳ». Օրենքով սահմանված կարգով՝ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք կարող են դիմել Սահմանադրական դատարան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Արտաշատ քաղաքի բնակելի շենքերից մեկի բակը լիքն է աղբով: Բնակիչները բողոքում են՝ ասելով, որ շարունակ մաքրելուց հետո, միեւնույնն է, շատ արագ նույն վիճակը վերականգնվում է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 4 + 9 +20 + 23	Արարատ	+15 + 18 +26 + 28
Կոտայքի լեռներ	+ 4 + 9 +19 + 22	Արմավիր	+14 + 16 +26 + 28
Կոտայքի նախալեռներ	+13 + 14 +23 + 26	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +18 + 21
Գեղարքունիք	+ 5 + 9 +19 + 22	Վայոց ձորի նախալեռներ	+15 + 18 +26 + 28
Լոռի	+7 + 12 +20 + 22	Սյունիքի հովիտներ	+15 + 19 +25 + 29
Տավուշ	+10 + 15 +23 + 25	Սյունիքի նախալեռներ	+ 2 + 12 +18 + 21
Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 +19 + 22	Արցախ	+15 + 19 +25 + 29
Արագածոտնի նախալեռներ	+12 + 15 +22 + 26	Երեւան	+16 + 18 +27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.6.2023**

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: